

ՌԻՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ՍԿԶԲԱՆԷ ՄԻՆՁ

ՅՄԱՐԵԱՅՈՒՆԻ ՀԱՐՄՏՈՒԹԻՒՆՆ

3. Մեր յնացաւորի վարդապետի ինքուհի. — Նախահայր անշուշտ կը խօսէին այն լեզուով որով գրուած են իրենց վիմադրոշմ արձանագրութիւնը, արդ այդ սեպագծեւ գրութիւնը սկսուած են կարգացուիլ, սակայն լեզուի մասին գիտունը կարծեօք կը տարբերին: Հինքս, Մօրթման աշխատեցան հայերէնով բացատրել, զայդ կը պնդէր Խեո Հիսարլեան. Հ. Սանտալճեան բառերու մեծ մասն միայն Հայերէն կը կարծէ, Կիւար անծանօթ լեզու մը կը համարի, Լընորման և Սէյս վրացերէնի մերձաւոր կը կարծեն, և սովաւ ոյժ տուած Կ'ըլլան Հերոդոտի վկայութեան՝ որ Ալորտեանն Նեիրն Արմէնիերէն ղէպ հիւսիս հալածեալ կը համարի. Միաբան (Փալուստ Տէր Մկրտիչեան) Ուտերէնի շատ մօտ Կ'ենթադրէ և սովաւ Հերոդոտի հետեողաց դասէն կրնայ համարուիլ: Ըստ ոմանց այս արձանագրութեանց մէջ խոր կամ խոռ բառէն զատ հայ բառ չտեսնուիր:

Մ. Մէյէ կը կարծէ թէ Հայ (Արմէն) լեզուն Ք.ս. 6-7 դար առաջ տեղական մի այլ լեզուէ շատ փոխառութիւններ բաւ, որ անշուշտ խալդեան բարբառն էր: Հայերէնն ալ Կովկասեան լեզուաց (վրացերէնի) նման սեռի հետը չունի, և սա վարդապետի լեզուի (խալդեանի) ազդեցութիւնն է (Մէյէ, Մառ): Լեզուաբանք և գլխաւորաբար Մառ՝ Սեմական լեզուաց և խալդեան ու Վրական բարբառներու միջև կարեւոր առնչութիւններ կը հաստատեն: Ոմանք կարծեցին իսկ թէ խալդեանն Սեմական լեզու մ'է, յորմէ սերած է վրացերէնէն, և որ կը բացատրուի Ալորտեանց ղէպ հիւսիս հալածուելովն. սակայն քանի որ խալդեանց Ասիական ցեղին վերաբերելն

այժմ աւելի ընդունուած է, գուցէ այդ առնչութիւնն Սեմականաց հետ շարունակական շփման արդիւնքն է:

Տըլակարդ և Յ. Միլլէր այժմու Հայ լեզուն իրանականի մի ճիւղն կը համարէին, սակայն Հիւրշման և այլ լեզուաբանք կը ցուցնեն թէ՛ իրանական ազդեցութիւնն նորագոյն ժամանակաց գործ է. իսկ բուն հայ լեզուն Արիական ընտանեաց աւելի եւրոպական ճիւղին մօտ է, որպէս և կը բացատրուի Արմէն ցեղի զաւուստն և բնագաւառն Նկատի առնելով:

Վերջապէս կան որ հայ լեզուն Դուրանական ընտանեաց մէջ կը դասեն, սակայն այդ հաւանական չէ և Դուրանական ազդեցութիւնն վերջին տասն դարերու գործն է:

Հայ լեզուի Արիականութեան գլխաւոր ապացոյցներն են թուականաց նմանութիւնն, քերականական ձեւերու նոյնութիւնն: Մ. Ս. Ն. Դ. զիմորոշք մեծ դեր կը խաղան հայերէն դերանուանց և բայից մէջ որպէս ի հնդեւրոպական լեզու: Անուններու սեռականի, տրականի, և գործիականի նշաններն ի. մ. ւ. վ. բ. նոյն են Լատիներէնի հետ:

Բայերու խոնարհումն մեծապէս կը նըմանի Յունականին: Հայերէնի ապաւորի մէջ ց գրին դերն կը տեսնուի և Սանսկրիտի մէջ:

Ի մի բան Նախահայոց կամ խալդեանց լեզուն Ասիական ընտանեաց կը վերաբերէր, և զոր Ալորտեանք ղէպ հիւսիս տանելով՝ Կովկասեան լեզուաց և գլխաւորապէս վրացերէնի ծնունդ տուաւ: Արմէնք Արեաց եւրոպական ճիւղին վերաբերելով՝ իրենց լեզուն աւելի Լատին

ներէնի և յունարէնի մօտ էր քան Արեաց Ասիական ճիւղերուն (Սանսկրիդի և Իրաներէնի)։

Խաղեան և Արմէնեան լեզուաց խառնուրդն է հայերէնն, ուր Արիական տարրն աւելի զօրաւոր է, և վերջապէս յընթացս ժամանակին իրանական և ապա Դուրաշական ազդեցութիւնը կրած է։

ԳԼՈՒԽ Բ.

Ուրուագիծ պատմութեան Հայոց մինչ ց'Աւրշակունի հարստութեան հաստատութիւնն.

1. Նախապատմական ժամանակ. — Մեր պատմահայրն՝ Խորենացին՝ Քրիստոսէ 23 դարեր առաջուրէն կը սկսի Հայոց պատմութիւնն, և որ հաւանականաբար Հայոցս Ասորեստանեայց հետ միենոյն ժամանակ պատմական կեանք մը սկսել տալու նշան պատկառ է։ Բայտ այժմու գիտական սկզբանց՝ եթէ ի նկատի առնեմք միայն վիմագիր արձանագրութիւնք և մօտաւոր ժամանակաց պատմիչներու վկայութիւնք՝ մեր բնագաւառի մասին ամենէն հին յիշատակութիւնն 14^{րդ} դարէն առաջ չ'անցնիր։ Նոյն իսկ եթէ 16^{րդ} դարու Թուղմէս Գ. Եզրիպտացի աշխարհակալի ի շարք իր նուաճած երկրաց յիշատակած Բոսիսէն առաջին հետեղութեամբ, այդ ժամանակուան Արմէնիան փոքր Ասիոյ հարաւակողմն ուրանելու է, գոցէ Մալաթիոյ շրջակայներն և ոչ թէ ի Մեծ Հայս, ուր Խաղեանք բնակէին այն առն։

Եզրիպտացիք դար մը միայն (16^{րդ}—15^{րդ}) իրենց իշխանութիւնն կրցան մինչ Հիւսիս

սային Սուրիա և Մալաթիա տարածել, և 15^{րդ} դարուն (1440 ի առնեններն) քաղաքեան։ Ասորեստանեայց սկսան տակաւ զօրանալ և իրենց իշխանութեան սահմաններն ընդլայնել, ի ձեռն Սաղմանասար Ա. Ի (1300—1275) և Թազաթ—Փալասար Ա. Ի (1275—1265) մինչ Նաիրի և Տիգրիսի ակունքն, կոմմագենէ, և Մոսոր (կապագաղովկիա)։

Շուրջ 1200ին առնեններն սակայն արդէն այս երկիրներն իրենց լուծն թօթափած ու ազատած էին։

Թազաթ—Փալասար Բ. (1130—1090) Ասորեստանեայց Թագաւորն դէպ ի հիւսիս երեք արշաւաններ կ'ընէ, առաջինով Քուրխիլէն (հիւսիսային Միջագետք և Կորդուաց աշխարհն) կը հպատակեցնէ, քաղաքներն կը կործանէ, աստուածներն կը գերէ ու երկրի հարստութիւնն կը կողոպտէ. երկրորդ արշաւանքով Նաիրիի վրայ կը քալէ ուր իրեն դէմ կ'եննեն 23 թագաւորներ... որոց օգնութեան կը փութան և այլք, որով ընդդիմադրաց թիւն 60ի կը հասնի. և այսպէս քանիցս չափուելով կը յաջողի զանոնք հպատակեցնել մեծ անգթութիւններ ի գործ դնելով, ու իշխանաց զաւակներն պատանդ առնելով կը հետնաքալ. ապա 1200 ձիւն և 2000 եղևի տուրքով զաւատ կը թողու զանոնք։ Եւրորդ արշաւանքով Մոսորներն և Կոմմագենիցիներն կը հպատակեցնէ։ Թազաթ—Փալասար բազմաթիւ յիշատակարաններով արձանագրել կու տայ իր արշաւներն, Մեր բնագաւառի մէջ երկուք են իր յիշատակարաններն, մին ի Կոմմագենի և միւսն Սուրնասայ այրին մէջ¹։

Ասուր—Նազիր—Աքալ Բ. Ի օրով (1060) Նաիրեցիք այլ հպատակաց նման իրենց լուծը կը թօթափեն։

1. Նինոսի և Շամիրամի 19րդ դարուն Հայաստանի տիրապետութիւնն՝ այդ անձնատուութեանց գոյութեան նման առասպելային է։

2. Մանագկերտէն 3 ժամ հեռի կը գտնուի։

3. Վերին Տիգրիսի ձախակողման մի օժանդակ գետն է, որ այժմ Սեպենկ—սու կամ Պիր

քիլե—սու կ'անուանուի. այս գետն իբր 6 ժամ ճանապարհալի երթալէ ետք՝ ապառաժի մը տակ կը մտնայ և կէս հազարամեղր հեռուէն դուրս կ'եննէ, այդ ելից տեղին այր մը կայ՝ յորում 5 արձանագրութիւններ կան, որոց մին Թազաթ—Փալասարինն է։

Թագաթատար կամ Թուկուլթինինը Բ. (889-885) Նաիրիի վրայ կ'երթայ և գայն կը հպատակեցնէ՝, սակայն ապա վերստին կ'ապստամբին:

Ասուր-Նագիր-Աբալ (885-886) իր մայրաքաղաքն դէպ ի հիւսիս, ի Քալաք կը տեղափոխէ, և կը սկսի դէպ հիւսիս և հիւսիսային արեւելք արշաւներ ընել: 884ին իր ձեռնարկած արշաւին առթիւ Նաիրեցիք նուէրներով գայն ետ կը դարձնեն, սակայն ապա կ'ապստամբին, ուստի և Ասուր-Նագիր-Աբալ անոնց վրայ կ'երթայ 880ին և 879ին և մեծ անգրթութիւններ ի գործ դնելով կը հնազանդեցնէ գանոնը: Սա առաջինն է Ասորեստանայց վեհապետներէն որ Ռարարտիոյ սահմաններն հասաւ, զրաւեց այն կիրճներն որք կը տանին դէպի Արժանիասի (Արածանի) աւազանն, Քիսառի (Սասուն), Կիւզան (Խիզոն?): Ռարարտիա հպատակութիւն խոտացաւ, որոյ վրայ կենդանացդ գինւոյ և աղիւնծի տուրք դրաւ: Կերկայացուցիչ մը կարգեց ի Քիսառի (Սասուն) և իբր կառավարութեան կեդրոնական քաղաք սահմանեց Տամտամագունն (հաւանա կանաքար խարբերդի և Տիարպէքի միջև): Սա ևս Սուրնատայ այրին մէջ մի արձանագրութիւն ունի: Ասուր-Նագիր-Աբալի իշխանութեան առաջին տարիներն Ռարարտիոյ վրայ կ'իշխէր Սարիտարիս՝

մը՝ որոյ յաջորդին Արամէի հետ չափուեցաւ ապա:

2. Խաղկան Հարստորին. — Այս տոններն (ի մէջ կոյս 9^{րդ} դարուն) մեր բնագաւառի նախկին իշխանութիւնք ի տես Ասորեստանայց օր քան զօր զօրանալուն՝ և նախատեսելով իրենց ընդհանուրին ըսպանացող վտանգն, դաշնակցական միութիւն մը կը կազմեն, իրենց գլուխ ունենալով Ռարարտիի Թագաւոր Արամէ՝ (Արամ) որ և Նաիրիի իշխան կ'անուանէր: Աս տոններն Ռարարտիան յաջողած էր իշխելու Նաիրիի արեւմտեան կէսին, Բիանայի, Արածանիի աւազանին (Տուրուբեւան) և Մալաթիոյ, Արամէի՝ կեդրոնական իշխանութեան մայրաքաղաքն էր Արգասքան:

Ասորեստանայց հաշտ աչքով չ'էին կրնար նայիլ այս միութեան վրայ, ուստի և Ասուր-Նագիր-Աբալ իր իշխանութեան 18^{րդ} տարին Արամէի վրայ գնաց, Կուպպուն այրեց, Տամտամագունի կողմն իջաւ, հակառակ իր անգթութիւններուն չկրցաւ գրաւել Ամիդն, և աւելի առաջ Երթալ չյանդգնելով, այն կողմերէն 6000 անձեր գերի վարեց և Նինուէի մօտերն իբր զաղութ հաստատեց: Իր մեկնելէն ետք կրկին ապստամբեցան այդ երկիրներն՝ անշուշտ Արամէի զրգամբ: Ասուր-Նագիր-

1. Սուրնատայ այրին մէջ ունի մի արձանագրութիւն:

2. Բելք և Լեհման Արամէէ առաջ կ'ընդունին այս Սարիտարիս՝ զաւակ Լութիպրինի մը: Լինջ այս երկու անձնագրութեանց (Լութիպրինի, Սարիտարիս) գոյութիւնն չընդունիր:

3. Գիտութեան ներկայ վիճակին մէջ մեզ կարելի չէ Ռարարտիոյ արքայից իշխանութեան սկիզբն և վախճանն որոշել, սակայն քանի որ իրենց ժամանակակից Ասորեստանայց Թագաւորներու իշխանութեան ժամանակն ցոյց կու տամք՝ դիւրին է մերայնոց ժամանակն մակաբերել:

4. Այս Արամէն խորենացուոյ Արամն ըլլալու է, ժամանակագրական տարբեր կարգաւ, որոյ հայրենասիրութիւնն զը վկայէ մեր պատմահայրն: Սա ըստ խորենացուոյ ժամանակակից էր Նինուսի՝ որ անոր մարգարտէ վարակալ կրելու

իշխանութիւնն տուաւ: Դիոնեսիոս Սիկիլպցին Նինուսի ժամանակակից Բարգանէս անուն Հայոց Թագաւոր մը կը յիշատակէ՝ որոյ յաղթած է Նինոս, սակայն ապա գայն իր իշխանութեան մէջ հաստատած: Գիտեմք արդէն թէ՝ Նինոս պատմական անձ չէ, այլ հասանալիսմարք Ասորեստանի Նեինք Աստուածն: Նամիրամ որ ըստ խորենացուոյ յաղթած ու պատերազմին մէջ սպաննած է Արամի զաւակն Արայն՝ նոյնպէս պատմական գոյութիւն չունի, Գուշխաններու մայր Աստուածուհին էր՝ նման մեր Անահայ: Ուստի և նկատի առնելու չեմք: Այսով ըստ Արամական լեզուի Բարձր Եսէի է:

5. Մաքեթո կը կարծէ թէ՝ այդ քաղաքն առաջապա յաշտարագրելու Արծիկն (Արծիկն) է՝ Արամագիւրտի մօտ: Իսկ ըստ այլոց կարեւոր հարաւ արեւելեան Արծն քաղաքն:

Արալ ունի և Սուրբնատի այրին մէջ մի ար-
ձանագրութիւն:

Սաղմանասար իր թագաւորութեան ա-
ռաջին տարին (860) արշաւեց Նաիրիի եր-
կիրն և խուրուչկիա գաւառն ասպատա-
կեց ու նոյն անուն քաղաքն և այլ բազ-
մաթիւ քաղաքներ այրեց. Կակիա թա-
գաւորիկն խոյս տուաւ: Սաղմանասար Ա-
րամէի Սուգունիա քաղաքին վրայ կ'եր-
թայ կ'առնէ: Այս նուաճումն ժամանա-
կաւոր ազգեցութիւն կ'ունենայ՝ ու կրկին
Նաիրեցիք Արամէի զորմամբ կ'ապստամ-
բին:

Սաղմանասար երկու տարի վերջ (857)
Արամէի իշխանութիւնն ի սպառ բառնալու
մտօք, մեծ բանակաւ դէպ Հիւսիս կ'ելնէ,
Նաիրին կը նուաճէ, Արածանին կ'անցնի,
Սուխմէի գաւառն կը մտնէ, Արգասքուն
վրայ կ'երթայ, ու պաշարմամբ կ'առնէ
կը կործանէ. սակայն Արամէ Առտարի
լեւներն ապստամբած էր: Սաղմանասար
իրիտիաւ լերան վրայ (Իրնկէօլ տաղ?) իր
յաղթութիւնն արձանագրել կու տայ, ու
Արամայիի (Արմաւիր?) վրայ կ'երթայ
կ'առնէ, կը քանդէ: Չանգիում երկիրն
անցնելով վանայ Ծոփն կ'երթայ, արձա-
նագրութիւն մը կը թողու. Գեղզանի իշ-
խանէն նուէր կ'ընդունի և Նաիրիի՝ Խու-
րուչկիա գաւառակի Կակիա իշխանին վը-
րայ կ'երթայ, անոր Շիւա ամրոցն կը
զրաւէ և 3000 մարդ կը գերէ ու իր
պատկերն Տիգրիսի ափանց ապառաժնե-
րու վրայ քանդակել կու տայ:

Յաջորդ տարին Կապուտան ծովու Հա-
րաւակողմն կ'արշաւէ, Ժողովուրդն նաւե-
րով ծովուն բացերն կը փախչին. Ասո-
րեստանեայն անոնց կը հետեի ու ծովն
արիւնով կը ներկէ: Այս ամէն յաջողու-

թիւններն ժամանակաւոր ազգեցութիւն
կ'ունենան, Արամէ կրկին իր երկիրներն
ձեռք կ'անցնէ, և վերջապէս 12 տարի-
ներ վերջ Սաղմանասար (845) կրկին
Նաիրիի վրայ կու գայ, Սուրբնատի այրին
մէջ արձանագրութիւն մը կը թողու, Ու-
րարտիոյ սահմաններն կը մտնէ և Գաիա-
նիի (Կարնոյ հարաւակողմն) իշխանն ա-
նոր կը հպատակի, և առանց Արամէի ե-
տեէն ինչալ խորհելու կը դառնայ:

Արամէի կը յաջորդէ Լուդիպրինի մը:
Ո՛վ էր Լուդիպրին, Ասորեստանեայց կող-
մանէ Ուրարտիոյ վրայ դրուած տեղացի
կառավարի՞ջ մը, թէ հարկատու իշխան
մը, թէ Արամէի գաւառն կամ անոր ցեղէն
յաջորդ մը և կամ սոսկ անհատ մը որ
Ազգ. իշխանութեան գլուխ կ'անցնի:

Լուդիպրինի գործոց մասին բան մը չգի-
տեմք, իր գաւառն Սարիդուրիա Ա², Ու-
րարտիոյ նշանաւոր թագաւորներէն կ'ըլ-
լայ:

Սաղմանասար Գ. քանիցս չափուեցաւ:
Սարիդուրիսի հետ, 833ին իր Տիւնասուր
զօրավարն Սարիդուրիսի վրայ դրկեց, որ
նախ յաղթեց, սակայն ապա յետս մղուե-
ցաւ: 830ին Մաննայի վրայ կ'երթայ,
Ուտաքի թագաւորը կը փախչի: 829ին
Տիւնասուր մեծ բանակաւ վերստին ե-
կաւ, խուրուչկիա, Մաննա, Պարսուա
ասպատակեց և Մուսասիրի Զարադիս
քաղաքն և 46 այլ քաղաքներ կործանեց,
Ուրարտիոյ 50 քաղաքներն այրեց, սա-
կայն քիչ վերջ Սարիսուրիս վերստին
ապստամբեցաւ:

Ն. ՏԱՂԱԽԱՐԱԿԱՆ

Շարայարկի

1. Ըստ Խորագոյն գիտերու երեք են Տիգրիսի
ափանց մօտ Սաղմանասարի թողած արձանա-
գրութիւններն, որոց երկուքով կը պարծենայ
թէ տիրած է Նաիրիի ծովէն (Վանայ լիճ) մին-
չև Մեծ ծովն արևմտից (Միջերկրական), թէ
զրաւած է ֆեթացոց ուշոյն աշխարհն, Սուհ-
միէի, Գախանիի, Ուրարտիոյ, Գեղզանի, իսկ
միւսով կը յաւելու թէ՛ տիրած է Արամէի Արգաս-

քուն քաղաքին, խուրուչկիայի, Միլիտինէի և
իր իշխանութիւնն տարածած է մինչև Ադի գետն
(Ալիս?): Սաղմանասար երեք արշաւներ ըրած
է ի հիւսիս, իր թագաւորութեան Ա. Գ. և Ժն
տարիներն, իր արձանագրութիւններն այս վեր-
ջին արշաւանաց ժամանակէն են:

2. Եթէ Արամէն առաջ մի այլ Սարիսուրիս
ընդունիմք, սա կ'ըլլայ Սարիսուրիս ի: